

ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Խորհրդի 2000 թվականի մայիսի 29-ի թիվ 1346/2000 կանոնակարգ

Մնանկության վարույթների մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով Եվրոպական համայնքի հիմնադրման մասին համաձայնագիրը և, մասնավորապես, դրա հոդվածներ 61«գ»-ն և 67«1»-ը,

հաշվի առնելով Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Ֆինլանդիայի Հանրապետության նախաձեռնությունը,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը¹,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը²,

Քանի որ.

- 1) Եվրոպական միությունն իր առջև նպատակ է դրել ստեղծել ազատության, անվտանգության և արդարադատության տարածք,
- 2) որպեսզի ներքին շուկան պատշաճ գործի, պահանջվում է, որպեսզի սնանկության միջսահմանային վարույթներն արդյունավետ կերպով անցկացվեն, և սույն Կանոնակարգը պետք է ընդունվի իրականացնելու համար Համաձայնագրի 65-րդ հոդվածի իմաստով քաղաքացիական հարցերի շուրջ դատական համագործակցության շրջանակներից բխող վերոնշյալ նպատակը,
- 3) ընկերությունների գործունեությունն ավելի և ավելի միջսահմանային բնույթ է ստանում և, հետևաբար, հաճախ դառնում է Համայնքի իրավունքի կարգավորման առարկա: Քանի դեռ նման ընկերությունների սնանկությունն ազդում է նաև հանգամանքի վրա, որպեսզի ներքին շուկան պատշաճ գործի, անհրաժեշտ է Համայնքի այնպիսի ակտ, որը պահանջում է համաձայնեցնել անվճարունակ պարտապանի ակտիվների հետ կապված ձեռնարկվող միջոցները,
- 4) որպեսզի ներքին շուկան պատշաճ գործի, անհրաժեշտ է խուսափել այն անձանց կողմից մեկ անդամ պետությունից մեկ այլ անդամ պետություն ակտիվների կամ դատական վարույթների փոխանցումը որևէ կերպ խրախուսելուց, որոնք ձգտում են հայտնվել առավել բարենպաստ իրավական վիճակում (forum shopping),
- 5) սույն նպատակները բավարար չափով չեն կարող իրականացվել ներպետական մակարդակով, և այդ իսկ պատճառով Համայնքի մակարդակով իրականացվող գործողությունն արդարացված է,
- 6) համաչափության սկզբունքի համաձայն՝ սույն Կանոնակարգը պետք է սահմանափակվի

¹ 2000 թվականի մարտի 2-ին ներկայացված եզրակացություն (պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել):
² 2000 թվականի հունվարի 26-ին ներկայացված եզրակացություն (պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել):

սնանկության վարույթներ հարուցելու իրավասությունը կանոնակարգող դրույթներով, ինչպես նաև վճիռներով, որոնք կայացվում են անմիջականորեն սնանկության վարույթների հիման վրա և սերտորեն կապված են նման վարույթների հետ: Ի լրումն, սույն Կանոնակարգը պետք է ընդգրկի այդ վճիռների ճանաչման և կիրառվող իրավունքի վերաբերյալ դրույթներ, որոնք նույնպես համապատասխանում են այդ սկզբունքին,

7) անվճարունակ ընկերությունների կամ այլ իրավաբանական անձանց գործունեության դադարման հետ կապված սնանկության վարույթները, դատարանի կողմից կիրառվող՝ վճարունակության վերականգմանն ուղղված միջոցառումները, պարտատերերի պահանջների բավարարման ստեղծումը (մորատորիում) և համանման վարույթները չեն կարգավորվում «Քաղաքացիական և առևտրային գործերով իրավասության և վճիռների կատարման մասին» Բրյուսելի 1968 թվականի կոնվենցիայով³ փոփոխված այդ Կոնվենցիային⁴ միանալու մասին կոնվենցիաներով,

8) միջսահմանային բնույթ կրող սնանկության վարույթների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է և նպատակահարմար, որպեսզի այս ոլորտում իրավասության, ճանաչման և կիրառվող իրավունքի մասին դրույթներն առկա լինեն Համայնքի իրավական միջոցում, որը պարտադիր է անդամ պետությունների համար և գործում է անմիջականորեն,

9) սույն Կանոնակարգը պետք է կիրառվի սնանկության վարույթների նկատմամբ, անկախ այն բանից պարտապանը ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, առևտրական գործունեություն իրականացնող անձ կամ անհատ: Սնանկության վարույթները, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Կանոնակարգը, թվարկված են հավելվածներում: Ապահովագրական կազմակերպություններին, վարկային հաստատություններին, երրորդ անձանց համար ֆինանսական միջոցներ կամ արժեթղթեր տնօրինող ներդրումային կազմակերպություններին և կոլեկտիվ ներդրումային կազմակերպություններին վերաբերող սնանկության վարույթները չպետք է ընդգրկվեն սույն Կանոնակարգի գործողության ոլորտում: Նման կազմակերպությունները չպետք է կարգավորվեն սույն Կանոնակարգով, քանի որ վերջիններիս նկատմամբ հատուկ միջոցառումներ են իրականացվում և ներպետական վերահսկիչ մարմինները որոշ չափով օժտված են միջամտության բավականին լայն իրավասություններով,

10) սնանկության վարույթներում պարտադիր չէ դատական մարմնի միջամտությունը. սույն Կանոնակարգում օգտագործվող «դատարան» արտահայտությանը պետք է տալ ավելի լայն իմաստ, որն իր մեջ ներառում է սնանկության վարույթ հարուցելու համար ներպետական իրավունքով լիազորված ֆիզիկական անձ կամ մարմին: Որպեսզի սույն Կանոնակարգը կիրառվի, վարույթները (որոնք բաղկացած են օրենքով սահմանված գործողություններից և ընթացակարգերից) պետք է ոչ միայն համապատասխանեն սույն Կանոնակարգի դրույթներին, այլ նաև պաշտոնապես ճանաչվեն և օրենքի սահմաններում կիրառվեն այն անդամ պետությունում, որտեղ հարուցվում են սնանկության վարույթները. վերջիններս պետք է լինեն սնանկության կոլեկտիվ վարույթներ, որոնք ենթադրում են պարտապանին իրավունքներից ամբողջությամբ կամ մասամբ զրկում և լուծարողի նշանակում,

11) սույն Կանոնակարգով ճանաչվում է այն փաստը, որ նյութական իրավունքների էական տարբերության պատճառով անիրատեսական է ամբողջ Համայնքում ներմուծել համընդհանուր

³ ՊՏ L 299, 31.12.1972թ., էջ 32:

⁴ ՊՏ L 204, 2.08.1975 թ., էջ 28; ՊՏ L 304, 30.10.1978 թ., էջ 1; ՊՏ L 388, 31.12.1982 թ., էջ 1; ՊՏ L 285, 3.10.1989 թ., էջ 1; ՊՏ C 15, 15.01.1997 թ., էջ 1:

կիրառության սնանկության վարույթներ: Վարույթի հարուցման վայրի անդամ պետության իրավունքի՝ առանց որևէ բացառությունների կիրառումը, այս ամենը հաշվի առնելով, հաճախ կհանգեցնեն դժվարությունների: Դա վերաբերում է, օրինակ, ապահովման միջոցների մասին՝ Համայնքում գործող իրարից մեծապես տարբերվող օրենքներին: Ավելին, որոշ պարտատերերին սնանկության վարույթներում ընձեռված արտոնյալ իրավունքները մի շարք դեպքերում լիովին տարբեր են: Սույն Կանոնակարգում այդ փաստը պետք է հաշվի առնվի երկու տարբեր ձևով: Մի կողմից, առանձնապես կարևոր իրավունքների և իրավահարաբերությունների (օրինակ՝ գույքային իրավունքներ և աշխատանքային պայմանագրեր) դեպքում կիրառվող իրավունքի վերաբերյալ պետք է նախատեսվեն հատուկ կանոններ: Մյուս կողմից, միայն վարույթի հարուցման վայրի անդամ պետությունում գտնվող ակտիվներն ընդգրկող ներպետական վարույթները պետք է նույնպես թույլատրվեն՝ համընդհանուր գործողության սնանկության հիմնական վարույթների հետ մեկտեղ,

12) սույն Կանոնակարգը հնարավորություն է ընձեռում, որպեսզի սնանկության հիմնական վարույթները հարուցվեն այն անդամ պետությունում, որտեղ կենտրոնացած են պարտապանի հիմնական շահերը, Այդ վարույթներն ունեն համընդհանուր գործողություն և միտված են ընդգրկելու պարտապանի բոլոր ակտիվները: Պաշտպանելու համար տարատեսակ շահերը՝ սույն Կանոնակարգը թույլ է տալիս հիմնական վարույթներին զուգահեռ հարուցել երկրորդական վարույթներ: Երկրորդական վարույթները կարող են հարուցվել պարտապանի տնտեսական գործունեության իրականացման վայրի անդամ պետությունում: Երկրորդական վարույթների հետևանքները տարածվում են միայն այդ պետությունում գտնվող ակտիվների վրա: Հիմնական վարույթների հետ համաձայնեցման պարտադիր կանոններն ուղղված են Համայնքում միասնականության անհրաժեշտության բավարարմանը,

13) «հիմնական շահերի կենտրոնը» պետք է համապատասխանի այն վայրին, որտեղ պարտապանը կանոնավոր կերպով իրականացնում է իր շահերը՝ այդպիսով ճանաչվելով երրորդ անձանց կողմից,

14) սույն Կանոնակարգը կիրառվում է միայն այն վարույթների դեպքում, երբ պարտապանի հիմնական շահերի կենտրոնը գտնվում է Համայնքում,

15) սույն Կանոնակարգով նախատեսված իրավասության նորմերով սահմանվում է միայն միջազգային իրավասություն, այսինքն՝ դրանք որոշում են այն անդամ պետությունը, որի դատարանները կարող են սնանկության վարույթ հարուցել: Այդ անդամ պետությունում տարածքային ընդդատությունը պետք է սահմանվի ներպետական իրավունքով,

16) սնանկության հիմնական վարույթներ հարուցելու իրավասությամբ օժտված դատարանին պետք է հնարավորություն տրվի ձեռնարկել ժամանակավոր և պաշտպանության միջոցներ՝ վարույթ հարուցելու պահանջի պահից սկսած: Սնանկության վարույթն սկսելուց առաջ և հետո ձեռնարկված պահպանման միջոցները չափազանց կարևոր են սնանկության վարույթի արդյունավետությունը երաշխավորելու համար: Այդ կապակցությամբ, սույն Կանոնակարգով պետք է նախատեսվեն տարբեր հնարավորություններ: Մի կողմից, սնանկության հիմնական վարույթների համար իրավասու դատարանը պետք է նույնպես հնարավորություն ունենա ժամանակավոր պաշտպանության միջոցներ կիրառելու այլ անդամ պետությունների տարածքում գտնվող ակտիվների նկատմամբ: Մյուս կողմից, մինչ հիմնական սնանկության վարույթ հարուցելը ժամանակավորապես նշանակված լուծարողը պետք է կարողանա այն անդամ պետություններում, որտեղ գտնվում է պարտապանի տնտեսական գործունեության իրականացման վայրը, այդ

պետությունների իրավունքում առկա պահպանման միջոցներ կիրառելու պահանջ ներկայացնել,

17) մինչ հիմնական սնանկության վարույթ հարուցելը սնանկության վարույթ հարուցելու պահանջ ներկայացնելու իրավունքը այն անդամ պետությունում, որտեղ գտնվում է պարտապանի տնտեսական գործունեության իրականացման վայրը, պետք է սահմանափակվի տեղական պարտատերերով և տեղական տնտեսական գործունեության իրականացման վայրի պարտատերերով կամ այն դեպքերով, երբ հիմնական վարույթները չեն կարող հարուցվել այն անդամ պետության իրավունքի համաձայն, որտեղ կենտրոնացած են պարտապանի հիմնական շահերը: Այս սահմանափակման պատճառն այն է, որ սնանկության հիմնական վարույթներին նախորդող սնանկության տարածքային վարույթների անցկացման դեպքերը նախատեսվում է սահմանափակել միայն բացարձակ անհրաժեշտության դեպքերով: Եթե հարուցվել են սնանկության հիմնական վարույթներ, տարածքային վարույթները դառնում են երկրորդական,

18) սնանկության հիմնական վարույթները հարուցելուց հետո սնանկության վարույթ հարուցելու պահանջ ներկայացնելու իրավունքն այն անդամ պետությունում, որտեղ գտնվում է պարտապանի տնտեսական գործունեության իրականացման վայրը, չի սահմանափակվում սույն Կանոնակարգով: Հիմնական վարույթներում լուծարողը կամ այդ անդամ պետության ներպետական իրավունքով լիազորված մեկ այլ անձ կարող է պահանջել հարուցել սնանկության երկրորդական վարույթներ,

19) սնանկության երկրորդական վարույթները, բացի ներքին շահերի պաշտպանությունից, կարող են ծառայել տարբեր նպատակների: Կարող են առաջանալ դեպքեր, երբ պարտապանի գույքի՝ որպես մեկ միավորի կառավարումը չափազանց բարդ է, կամ, երբ համապատասխան իրավական համակարգերում առկա տարբերություններն այնքան մեծ են, որ դժվարություններ կարող են առաջանալ վարույթի հարուցման վայրի պետության իրավունքից բխող հետևանքները ակտիվների գտնվելու վայրի պետությունների վրա տարածելու հարցում: Այդ իսկ պատճառով հիմնական վարույթներում լուծարողը կարող է պահանջել երկրորդական վարույթներ հարուցել, եթե դա պահանջվում է գույքի արդյունավետ կառավարման համար,

20) սնանկության հիմնական և երկրորդական վարույթները կարող են, այդուհանդերձ, նպաստել ընդհանուր ակտիվների արդյունավետ իրացմանը, միայն եթե գուզահեռ անավարտ բոլոր վարույթները համաձայնեցվում են: Դրա հիմնական պայմանն այն է, որ տարբեր լուծարողներ պետք է սերտորեն համագործակցեն, մասնավորապես՝ փոխանակելով բավականաչափ ծավալի տեղեկություններ: Ապահովելու համար սնանկության հիմնական վարույթների գերակա դերը, նման վարույթում մասնակից լուծարողին պետք է ընձեռնվեն մի շարք հնարավորություններ՝ միջամտելու միաժամանակ ընթացող սնանկության երկրորդական վարույթներում: Օրինակ, նա պետք է կարողանա առաջարկել պարտքերի վերակառուցման ծրագիր կամ պարտատերերի պահանջների բավարարման սառեցում (մորատորիում) կամ դիմել սնանկության երկրորդական վարույթներում ակտիվների իրացումը կասեցնելու պահանջով,

21) յուրաքանչյուր պարտատեր, որը մշտապես կամ առավելապես բնակվում է Համայնքում կամ որի գնտվելու վայրը Համայնքում է, պետք է իրավունք ունենա պարտապանի ակտիվների հետ կապված իր պահանջները ներկայացնել Համայնքում ընթացող սնանկության վարույթներից յուրաքանչյուրում: Դա պետք է նաև կիրառվի հարկային մարմինների և սոցիալական ապահովագրության հաստատությունների նկատմամբ: Այդուհանդերձ, ապահովելու համար պարտատերերի նկատմամբ հավասար ռեժիմի կիրառումը, հասույթների բաշխումը պետք է

համաձայնեցվի: Յուրաքանչյուր պարտատեր պետք է կարողանա պահպանել այն, ինչ ձեռք է բերել սնանկության վարույթների ընթացքում, սակայն նա պետք է իրավունք ունենա մասնակցելու այլ վարույթներում ընդհանուր ակտիվների բաշխմանը, եթե միայն բավարարվել են միևնույն կարգավիճակում գտնվող պարտատերերի միևնույն քանակությամբ պահանջները,

22) սույն Կանոնակարգով պետք է նախատեսվի դրա գործողության ոլորտում գտնվող սնանկության վարույթներ հարուցելու, իրականացնելու և ավարտելու վերաբերյալ վճիռների, ինչպես նաև նման վարույթների հետ ուղղակիորեն կապված վարույթներում կայացված վճիռների անվերապահ ճանաչում: Ինքնաբերաբար ճանաչումն, այսպիսով, ենթադրում է, որ վարույթի հարուցման վայրի անդամ պետության իրավունքի համաձայն առաջացող հետևանքները տարածվում են բոլոր այլ անդամ պետությունների վրա: Անդամ պետությունների դատարանների կայացրած վճիռների ճանաչումը պետք է հիմնված լինի փոխվստահության սկզբունքի վրա: Այդ իսկ նպատակով չճանաչման համար հիմքերը պետք է հասցվեն անհրաժեշտ նվազագույնի: Այդ հիմքով պետք է լուծվի նաև յուրաքանչյուր վեճ այն դեպքում, երբ երկու անդամ պետությունների դատարանները պնդում են, որ իրավասու են հարուցելու սնանկության հիմնական վարույթներ: Առաջին դատարանի՝ վարույթ հարուցելու որոշումը պետք է ճանաչվի այլ անդամ պետություններում՝ առանց այդ որոշումը վերլուծելու իրավասության,

23) սույն Կանոնակարգով պետք է սահմանվեն, դրանով կարգավորվող հարցերի մասով, միասնական կոլիզիոն նորմեր, որոնք իրենց գործողության ոլորտում փոխարինում են միջազգային մասնավոր իրավունքի ներպետական նորմերին: Եթե այլ բան նախատեսված չէ, պետք է կիրառվի վարույթի հարուցման վայրի անդամ պետության իրավունքը (*lex concursus*): Սույն կոլիզիոն նորմը պետք է կիրառվի ինչպես հիմնական վարույթների, այնպես էլ տեղական վարույթների նկատմամբ. *lex concursus*-ը որոշում է սնանկության վարույթների բոլոր հետևանքները՝ ընթացակարգային և նյութաիրավական, շահագրգիռ անձանց և իրավահարաբերությունների մասով: Այն կանոնակարգում է սնանկության վարույթներ հարուցելու, իրականացնելու և ավարտելու բոլոր պայմանները,

24) սնանկության այն վարույթների ինքնաբերաբար ճանաչումը, որոնց նկատմամբ սովորաբար կիրառվում է վարույթի հարուցման վայրի պետության իրավունքը, կարող է հակասել այն նորմերին, որոնց համաձայն գործարքներն իրականացվում են այլ անդամ պետություններում: Պաշտպանելու համար օրինական սպասումները և գործարքների որոշակիությունը անդամ պետություններից բացի այն անդամ պետություններում, որտեղ հարուցվում են վարույթները, պետք է ընդհանուր կանոնից նախատեսել մի շարք բացառություններ,

25) գույքային իրավունքների դեպքում առանձնակի անհրաժեշտություն կա շեղվելու այն պետության իրավունքից, որտեղ հարուցվում է վարույթը, քանի որ այդ իրավունքները, պարտք տրամադրելու առումով, զգալի կարևորություն ունեն: Նման գույքային իրավունքի հիմքը, վավերությունը և շրջանակը պետք է, այսպիսով, որպես կանոն, որոշվի գույքի գտնվելու վայրի իրավունքով (*lex situs*), և սնանկության վարույթի հարուցումը չպետք է շոշափի այդ իրավունքը: Գույքի նկատմամբ իրավունք ունեցող անձը պետք է, այսպիսով, կարողանա շարունակել օգտվել գույքային ապահովման միջոցի հետ կապված իր հայցն առանձնացնելու կամ առանձին լուծելու իրավունքից: Եթե *lex situs*-ի համաձայն ակտիվները հանդիսանում են որևէ անդամ պետությունում գույքային իրավունքի առարկա, սակայն հիմնական վարույթներն իրականացվում են մեկ այլ անդամ պետությունում, հիմնական վարույթներում լուծարողը պետք է կարողանա պահանջել

երկրորդական վարույթներ հարուցել այն իրավագործության ներքո, որտեղ ծագում են գույքային իրավունքները, եթե պարտապանի տնտեսական գործունեության իրականացման վայրը գտնվում է այնտեղ: Եթե երկրորդական վարույթ չի հարուցվում, գույքային իրավունքների առարկա հանդիսացող ակտիվի վաճառքի արդյունքում ստացվող ավելցուկը պետք է վճարվի հիմնական վարույթներում մասնակից լուծարողին,

26) եթե վարույթի հարուցման վայրի անդամ պետության իրավունքով հաշվանց չի թույլատրվում, պարտատերն այնուհանդերձ պետք է հաշվանցի իրավունք ունենա, եթե դա հնարավոր է անվճարունակ պարտապանի պահանջի նկատմամբ կիրառվող իրավունքի համաձայն: Այս կերպ հաշվանցումը ձեռք կբերի երաշխիքային գործառույթ՝ հիմնված իրավական դրույթների վրա, որոնց վրա շահագրգիռ պարտատերը կարող է հենվել պահանջի ներկայացման դեպքում,

27) հատուկ պաշտպանության անհրաժեշտություն առկա է նաև վճարային համակարգերի և ֆինանսական շուկաների դեպքում: Դա վերաբերում է, օրինակ, նման համակարգերին բնորոշ՝ ֆինանսական դիրքը փակելու և հակընդդեմ պահանջների և պարտավորությունների հաշվանցման մասին համաձայնությունների, ինչպես նաև արժեթղթերի վաճառքի և նման գործարքներով նախատեսվող երաշխիքների նկատմամբ, որոնք կարգավորվում են մասնավորապես «Վճարահաշվարկային համակարգում վերջնահաշվարկների և արժեթղթերով կատարվող գործարքների վերջնահաշվարկի համակարգերի մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի 1998 թվականի մայիսի 19-ի թիվ 98/26/ԵՀ կանոնակարգով⁵: Նման գործարքների համար միակ հիմնական իրավունքը պետք է, այսպիսով, լինի համապատասխան համակարգի կամ շուկայի նկատմամբ կիրառվող իրավունքը: Սույն դրույթի նպատակն է գործընկերոջ անվճարունակության դեպքում կանխել անդամ պետությունների վճարային և հաշվանցի համակարգերում կամ կարգավորվող ֆինանսական շուկաներում գործարքների կարգավորման և վճարման մեխանիզմների փոփոխման հնարավորությունը: Թիվ 98/26/ԵՀ հրահանգը պարունակում է հատուկ դրույթներ, որոնք գերակա են սույն Կանոնակարգում առկա ընդհանուր կանոնների նկատմամբ,

28) պաշտպանելու համար աշխատողներին և աշխատատեղերը՝ սնանկության վարույթների հետևանքներն աշխատանքը շարունակելու կամ դադարեցնելու, ինչպես նաև նման աշխատանքի հետ առնչվող բոլոր կողմերի իրավունքների և պարտականությունների վրա պետք է սահմանվեն պայմանագրի նկատմամբ կիրառվող իրավունքով՝ ընդհանուր կոլիզիոն նորմերին համապատասխան: Սնանկությանն առնչվող բոլոր հարցերն առ այն, թե արդյո՞ք աշխատողների պահանջները պաշտպանվում են արտոնյալ իրավունքներով և թե ի՞նչ կարգավիճակ կարող են ունենալ նման արտոնյալ իրավունքները, պետք է սահմանվեն վարույթի հարուցման վայրի անդամ պետության իրավունքով,

29) ձեռնարկատիրական գործունեության նկատառումներից ելնելով՝ վարույթ հարուցելու մասին որոշման հիմնական տեքստը պետք է հրապարակվի այլ անդամ պետություններում՝ լուծարողի պահանջի համաձայն: Եթե պարտապանի տնտեսական գործունեության իրականացման վայրը տվյալ անդամ պետությունում է, ապա կարող է սահմանվել պահանջ, որպեսզի հրապարակումը պարտադիր բնույթ կրի: Երկու դեպքերից և ոչ մեկում, այդուհանդերձ, հրապարակումը չի կարող նախապայման հանդիսանալ օտարերկրյա վարույթների ճանաչման համար,

⁵ ՊՏԼ 166, 11.06.1998թ., էջ 45

30) կարող է պատահել, որ շահագրգիռ անձանցից ոմանք իրականում տեղյակ չեն վարույթների հարուցման մասին և գործում են բարեխղճորեն՝ իրենց գործողություններով հակասելով նոր ստեղծված իրավիճակին: Պաշտպանելու համար նման անձանց, ովքեր, հարուցված օտարերկրյա վարույթների մասին անտեղյակ լինելու պատճառով, վճարում են պարտապանին, երբ իրականում նրանք պետք է վճարումը կատարեին օտարերկրյա լուծարողին, պետք է նախատեսել, որ նման վճարման արդյունքում պարտքը չեղյալ համարվի,

31) սույն Կանոնակարգը պետք է ներառի սնանկության վարույթների կազմակերպման վերաբերյալ հավելվածներ: Քանի որ այդ Հավելվածները վերաբերում են բացառապես անդամ պետությունների օրենսդրությանը, կան կոնկրետ և հիմնավորված պատճառներ, որոնց հիման վրա Խորհուրդն այդ Հավելվածները փոփոխելու իրավունք է վերապահում՝ անդամ պետությունների ներպետական իրավունքում կատարվող ցանկացած փոփոխություն հաշվի առնելու նպատակով,

32) Միացյալ Թագավորությունը և Իռլանդիան՝ Եվրոպական համայնքի հիմնադրման մասին համաձայնագրի և Եվրոպական միության մասին համաձայնագրին կից ներկայացված Միացյալ Թագավորության և Իռլանդիայի դիրքորոշման մասին արձանագրության երրորդ հոդվածի համաձայն, հայտնել են սույն Կանոնակարգի ընդունմանը և կիրառմանը մասնակցելու իրենց ցանկության մասին,

33) Դանիան՝ Եվրոպական Համայնքի հիմնադրման մասին համաձայնագրի և Եվրոպական միության մասին համաձայնագրին կից ներկայացված Դանիայի դիրքորոշման մասին արձանագրության առաջին և երկրորդ հոդվածների համաձայն, չի մասնակցում սույն Կանոնակարգի ընդունմանը, և, հետևաբար, վերջինս պարտադիր չէ Դանիայի համար և չի կիրառվում դրա նկատմամբ,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

ԳԼՈՒԽ I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1 Գործողության ոլորտը

1. Սույն Կանոնակարգը կիրառվում է սնանկության կոլեկտիվ վարույթների նկատմամբ, ինչը ենթադրում է պարտապանին իրավունքներից ամբողջությամբ կամ մասամբ զրկում և լուծարողի նշանակում:

2. Սույն Կանոնակարգը չի կիրառվում ապահովագրական կազմակերպությունների, վարկային հաստատությունների, երրորդ անձանց ֆինանսական միջոցների կամ արժեթղթերի տնօրինման ծառայություններ մատուցող ներդրումային ընկերությունների կամ կոլեկտիվ ներդրումային ընկերությունների վերաբերյալ սնանկության վարույթների նկատմամբ:

Հոդված 2 Սահմանումներ

Սույն Կանոնակարգի իմաստով՝

ա) «սնանկության վարույթ» նշանակում է հողված 1«1»-ում նշված կոլեկտիվ վարույթները: Այդ վարույթները թվարկված են հավելված Ա-ում:

բ) «լուծարող» նշանակում է որևէ անձ կամ մարմին, որի գործառույթն է՝ կառավարել կամ իրացնել այն ակտիվները, որոնցից պարտապանը գրկվել է, կամ վերահսկել նրա գործերի կառավարումը: Այդ անձինք և մարմինները թվարկված են հավելված Գ-ում:

գ) «լուծարային վարույթ» նշանակում է «ա» կետի իմաստով սնանկության վարույթներ, որոնք ներառում են պարտապանի ակտիվների իրացումը՝ այդ թվում այն դեպքերը, երբ վարույթներն ավարտվում են մորատորիումով կամ անվճարունակությունը դադարեցնող մեկ այլ միջոցով, կամ ակտիվների ոչ բավարար լինելու պատճառով: Այդ վարույթները ներկայացված են հավելված Բ-ում:

ե) «վճիռ»-ը, սնանկության վարույթներ հարուցելու կամ լուծարող նշանակելու կապակցությամբ, ներառում է նման վարույթներ հարուցելու կամ լուծարող նշանակելու համար լիազորված որևէ դատարանի որոշումը:

զ) «վարույթ հարուցելու պահ» նշանակում է այն օրը, երբ վարույթ հարուցող վճիռը ուժի մեջ է մտնում՝ անկախ այն բանից՝ դա վերջնական վճիռ է, թե ոչ:

է) «անդամ պետություն, որտեղ գտնվում են ակտիվները» նշանակում է՝

- գույքի դեպքում՝ անդամ պետությունը, որի տարածքում դրանք գտնվում են:

- այն գույքի դեպքում, որի նկատմամբ սեփականության իրավունքը, ինչպես նաև իրավունքների դեպքում, որոնք պետք է գրանցվեն պետական գրանցամատյանում՝ անդամ պետությունը, որի իրավասության ներքո վարվում է պետական գրանցամատյանը: պահանջների դեպքում՝ անդամ պետությունը, որի տարածքում գտնվում է դրանք բավարարելու պարտականություն կրող երրորդ անձի հիմնական շահերի կենտրոնը, ինչպես սահմանված է հողված 3«1»-ով:

ը) «տնտեսական գործունեության իրականացման վայր» նշանակում է գործունեության որևէ վայր, որտեղ պարտապանն իրականացնում է մարդկային ռեսուրսներ և ապրանքներ ներառող տնտեսական ոչ ժամանակավոր գործունեություն:

Հոդված 3

Միջազգային իրավասությունը

1. Այն անդամ պետության դատարանները, որոնց տարածքում կենտրոնացած են պարտապանի հիմնական շահերը, ունի սնանկության վարույթ հարուցելու իրավասություն: Ընկերության կամ իրավաբանական անձանց դեպքում, գտնվելու վայրը համարվում է հիմնական շահերի կենտրոն՝ հակառակն ապացուցող փաստի բացակայության դեպքում:

2. Եթե պարտապանի հիմնական շահերի կենտրոնը գտնվում է անդամ պետության տարածքում, մեկ այլ անդամ պետության դատարաններն ունեն այդ պարտապանի նկատմամբ սնանկության վարույթ հարուցելու իրավասություն, միայն եթե նրա տնտեսական գործունեության իրականացման վայրը գտնվում է այդ՝ մեկ այլ անդամ պետության տարածքում: Այդ վարույթների հետևանքները սահմանափակվում են պարտապանի՝ նշված անդամ պետության տարածքում գտնվող ակտիվներով:

3. Եթե 1-ին պարբերության համաձայն սնանկության վարույթ է հարուցվել, հետագայում 2-րդ պարբերության համաձայն հարուցված բոլոր վարույթները համարվում են երկրորդական վարույթներ: Վերջիններս պետք է լինեն լուծարային վարույթներ:

4. 1-ին պարբերության համաձայն սնանկության հիմնական վարույթներ հարուցելուց առաջ 2-րդ պարբերությունում նշված սնանկության տարածքային վարույթները կարող են հարուցվել միայն հետևյալ դեպքերում՝

ա) եթե 1-ին պարբերության համաձայն սնանկության վարույթները չեն կարող հարուցվել այն անդամ պետության իրավունքով սահմանված պայմանների պատճառով, որի տարածքում գտնվում է պարտապանի հիմնական շահերի կենտրոնը, կամ

բ) եթե սնանկության տարածքային վարույթի հարուցումը պահանջվում է պարտատիրոջ կողմից, որը մշտապես կամ առավելապես բնակվում է կամ որի գտնվելու վայրը այն անդամ պետությունում է, որի տարածքում գտնվում է տնտեսական գործունեության իրականացման վայրը, կամ որի պահանջը ծագում է այդ գործունեության իրականացումից:

Հոդված 4 **Կիրառվող իրավունքը**

1. Բացառությամբ սույն Կանոնակարգով նախատեսված դեպքերի՝ սնանկության վարույթների և դրանց հետևանքների նկատմամբ կիրառվում է այն անդամ պետության իրավունքը, որի տարածքում նման վարույթները հարուցվում են, այսուհետ՝ «վարույթի հարուցման վայրի պետություն»:

2. Վարույթի հարուցման վայրի պետության իրավունքով սահմանվում են այդ վարույթները հարուցելու, իրականացնելու և ավարտելու պայմանները: Այն մասնավորապես սահմանում է՝

ա) պարտապաններին, որոնց նկատմամբ կարող է սնանկության վարույթ հարուցվել՝ հաշվի առնելով նրանց ֆինանսական վիճակը.

բ) ակտիվները, որոնք կազմում են ունեցվածքի մի մասը կամ ակտիվների նկատմամբ կիրառվող ռեժիմը, որը ձեռք է բերվում պարտապանի կողմից կամ փոխանցվում է նրան սնանկության վարույթ հարուցելուց հետո.

գ) պարտապանի և լուծարողի համապատասխան իրավասությունները.

դ) պայմաններ, որոնց ներքո կարող է կիրառվել հաշվանցում.

ե) սնանկության վարույթների հետևանքները գործող պայմանագրերի վրա, որոնց կողմ է հանդիսանում պարտապանը.

գ) առանձին պարտատերերի կողմից հարուցված գործերի համար սնանկության վարույթների հետևանքները՝ բացառությամբ վարույթում գտնվող դատական գործերի.

ե) պահանջները, որոնք պետք է ներկայացվեն պարտապանի գույքի նկատմամբ, և սնանկության վարույթ հարուցելուց հետո ծագած պահանջների նկատմամբ կիրառվող ռեժիմը.

ը) պահանջներ ներկայացնելու, դրանք քննելու և ընդունելու կարգը սահմանող կանոնները.

թ) կանոնները, որոնցով կարգավորվում են ակտիվների իրացման արդյունքում ստացվող հասույթի բաշխումը, պահանջների բավարարման հերթականությունը և այն պարտատերերի իրավունքները, ովքեր գույքային իրավունքի հիման վրա կամ հաշվանցման միջոցով մասամբ բավարարել են իրենց պահանջը սնանկության վարույթ հարուցելուց հետո.

ժ) սնանկության վարույթն ավարտելու համար պայմանները և դրա հետևանքները, մասնավորապես մորատորիումի միջոցով.

ժա) պարտատերերի իրավունքներն սնանկության վարույթն ավարտելուց հետո.

ժբ) սնանկության վարույթում դատական ծախսերը կրողին.

ժգ) բոլոր պարտատերերի շահերին հակասող իրավական ակտերի առոչնչության, վիճարկելիության և կատարման ենթակա չլինելու հետ կապված կանոնները:

Հոդված 5

Երրորդ անձանց գույքային իրավունքները

1. Սնանկության վարույթի հարուցումը չի ազդում պարտապանին պատկանող՝ նյութական կամ ոչ նյութական, շարժական կամ անշարժ՝ թե՛ հատուկ, թե՛ հավաքական անորոշ և ժամանակ առ ժամանակ փոփոխվող ու վարույթ սկսելու պահին մեկ այլ անդամ պետության տարածքում գտնվող ակտիվների նկատմամբ պարտատերերի իրավունքների վրա:

2. 1–ին պարբերությունում նշված իրավունքները մասնավորապես նշանակում են՝

ա) ակտիվներն օտարելու կամ դրանք օտարելու պահանջ ներկայացնելու և այդ ակտիվներից ստացվող հասույթից կամ եկամտից բավարարում ստանալու իրավունք, մասնավորապես գրավի կամ հիփոթեքի հիման վրա.

բ) պահանջը բավարարելու բացառիկ իրավունք, մասնավորապես պահանջի հետ կապված գրավով կամ երաշխավորության միջոցով պահանջի փոխանցմամբ ապահովված իրավունք.

գ) ակտիվները տիրապետելու կամ օգտագործելու իրավունք ունեցող անձի իրավունքը պահանջել այդ ակտիվները կամ դրանց հետ վերադարձը (փոխհատուցումը) անձից, ով տիրապետում կամ օգտագործում է դրանք իր կամքին հակառակ.

դ) ակտիվների շահավետ օգտագործմանն ուղղված գույքային իրավունք:

3. Այն իրավունքը, որը գրանցված է պետական գրանցում իրականացնող մարմնում և կիրարկելի է երրորդ անձանց նկատմամբ, և որի համաձայն կարող է 1-ին պարբերության իմաստով գույքային իրավունք ձեռք բերվել, համարվում է գույքային իրավունք:

4. 1-ին պարբերությունը չի սահմանափակում հողված 4«2»«ժգ»-ում նշված առոչնչության, վիճարկելիության և կատարման ենթակա չլինելու վերաբերյալ հայց հարուցելու հնարավորությունը:

Հոդված 6 Հաշվանցումը

1. Սնանկության վարույթի հարուցումը չի սահմանափակում պարտատերերի՝ պարտապանի պահանջների հաշվանցման իրավունքը, եթե նման հաշվանցումը թույլատրվում է անվճարունակ պարտապանի պահանջի նկատմամբ կիրառվող իրավունքով:

2. 1-ին պարբերությունը չի սահմանափակում հողված 4«2»«ժգ»-ում նշված առոչնչության, վիճարկելիության և կատարման ենթակա չլինելու վերաբերյալ հայց հարուցելու հնարավորությունը:

Հոդված 7 Սեփականության իրավունքի պահպանումը

1. Ակտիվ ձեռք բերողի նկատմամբ սնանկության վարույթ հարուցելը չի սահմանափակում սեփականության իրավունքի պահպանման վրա հիմնված վաճառողի իրավունքները, եթե վարույթ հարուցելու պահին ակտիվը գտնվում է վարույթի հարուցման վայրի պետությունից բացի որևէ անդամ պետության տարածքում:

2. Ակտիվ վաճառողի նկատմամբ սնանկության վարույթ հարուցելը՝ ակտիվը փոխանցելուց հետո, վաճառքը չեղյալ համարելու կամ դադարեցնելու հիմքեր չի ստեղծում և չի խոչընդոտում գնորդի կողմից ակտիվի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելուն, եթե վարույթ հարուցելու պահին ակտիվը գտնվում է վարույթի հարուցման վայրի պետությունից բացի որևէ անդամ պետության տարածքում:

3. 1-ին և 2-րդ պարբերությունները չեն սահմանափակում հողված 4«2»«ժգ»-ում նշված առոչնչության, վիճարկելիության և կատարման ենթակա չլինելու վերաբերյալ հայց հարուցելու հնարավորությունը:

Հոդված 8 Անշարժ գույքի հետ կապված պայմանագրերը

Անշարժ գույքի ձեռքբերման կամ օգտագործման իրավունք վերապահող պայմանագրի համար սնանկության վարույթների հետևանքները կարգավորվում են միայն այն անդամ պետության իրավունքով, որի տարածքում գտնվում է այդ գույքը:

Հոդված 9
Վճարային համակարգերը և ֆինանսական շուկաները

1. Չսահմանափակելով 5-րդ հոդվածի գործողությունը՝ վճարային կամ հաշվարկային համակարգի կամ ֆինանսական շուկայի մասնակիցների իրավունքների և պարտականությունների համար սնանկության վարույթների հետևանքները կարգավորվում են բացառապես այդ համակարգի կամ շուկայի նկատմամբ կիրառվող անդամ պետության իրավունքով:

2. 1-ին պարբերությունը չի սահմանափակում առոչնչության, վիճարկելիության և կատարման ենթակա չլինելու վերաբերյալ հայց հարուցելու հնարավորությունը, որոնք կարող են ձեռնարկվել համապատասխան վճարային համակարգի կամ ֆինանսական շուկայի նկատմամբ կիրառվող իրավունքի համաձայն վճարումները կամ գործարքները չեղյալ համարելու համար:

Հոդված 10
Աշխատանքային պայմանագրերը

Աշխատանքային պայմանագրերի և հարաբերությունների համար սնանկության վարույթների հետևանքները կարգավորվում են բացառապես աշխատանքային պայմանագրի նկատմամբ կիրառվող անդամ պետության իրավունքով:

Հոդված 11
Գրանցման ենթակա իրավունքների համար առաջացող հետևանքները

Պետական գրանցամատյանում գրանցման ենթակա՝ անշարժ գույքի, նավերի կամ ինքնաթիռների նկատմամբ պարտապանի իրավունքների համար սնանկության վարույթների հետևանքները սահմանվում են այն անդամ պետության իրավունքով, որի իրավասության ներքո վարվում է գրանցամատյանը:

Հոդված 12
Համայնքի արտոնագրերը և առևտրային նշանները

Սույն Կանոնակարգի իմաստով, Համայնքի արտոնագիրը, Համայնքի առևտրային նշանը կամ Համայնքի իրավունքով սահմանված այլ համանման իրավունք կարող է ընդգրկվել միայն հոդված 3«1»-ում նշված վարույթներում:

Հոդված 13
Վնասակար գործողությունները

Հոդված 4«2»«ժգ»-ն չի կիրառվում այն դեպքում, երբ անձը, որը շահել է բոլոր պարտատերերի համար վնասակար գործողությունից, ապացույց է տրամադրում առ այն, որ

- նշված գործողությունը կարգավորվում է, վարույթի հարուցման վայրի պետությունից բացի, որևէ

անդամ պետության իրավունքով.

- այդ անդամ պետության իրավունքը չի նախատեսում այդ գործողության վիճարկում համապատասխան դեպքում:

Հոդված 14

Երրորդ անձ հանդիսացող գնորդերի պաշտպանությունը

Եթե սնանկության վարույթ հարուցելուց հետո կնքված ակտով պարտապանը փոխհատուցման դիմաց օտարում է՝

- անշարժ ակտիվ կամ

- պետական գրանցամատյանում գրանցման ենթակա նավ կամ ինքնաթիռ, կամ

- արժեթղթեր, որոնց առկայությունը ենթադրում է գրանցում օրենքով սահմանված գրանցամատյանում,

այդ ակտի վավերությունը կարգավորվում է այն պետության իրավունքով, որի տարածքում գտնվում է ակտիվը կամ որի իրավասության ներքո վարվում է գրանցամատյանը:

Հոդված 15

Սնանկության վարույթների հետևանքները վարույթում գտնվող հայցերի համար

Ակտիվի կամ իրավունքի, որից զրկվել է պարտապանը, վերաբերյալ սնանկության վարույթի հետևանքները վարույթում գտնվող հայցերի համար կարգավորվում են բացառապես այն անդամ պետության իրավունքի համաձայն, որտեղ քննվում է տվյալ հայցը:

ԳԼՈՒԽ II

ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՒՄԸ

Հոդված 16

Սկզբունքը

1. 3-րդ հոդվածի համաձայն իրավասություն ունեցող անդամ պետության դատարանի կայացրած՝ սնանկության վարույթ հարուցելու մասին յուրաքանչյուր վճիռ ճանաչվում է մյուս բոլոր անդամ պետություններում այն պահից, երբ այն ուժի մեջ է մտնում վարույթի հարուցման վայրի պետությունում: Այս կանոնը նաև կիրառվում է այն դեպքերում, երբ, հաշվի առնելով պարտապանի ֆինանսական վիճակը, նրա դեմ սնանկության վարույթ չի կարող հարուցվել այլ անդամ պետություններում:

2. Հոդված 3«1»-ում նշված վարույթների ճանաչումը չի սահմանափակում հոդված 3«2»-ում նշված վարույթների հարուցման հնարավորությունը մեկ այլ անդամ պետության դատարանի կողմից: Այդ վարույթները սնանկության երկրորդական վարույթներ են՝ Գլուխ III-ի իմաստով:

Հոդված 17
Ճանաչման հետևանքները

1. Հոդված 3«1»-ում նշված վարույթը հարուցող վճիռը, առանց որևէ ձևականությունների, առաջացնում է միևնույն հետևանքները ցանկացած այլ անդամ պետությունում, ինչ, վարույթի հարուցման վայրի պետությունում, եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոնակարգով, և քանի դեռ հոդված 3«2»-ում նշված ոչ մի վարույթ չի հարուցվում այդ մյուս անդամ պետությունում:

2. Հոդված 3«2»-ում նշված վարույթների հետևանքները չեն կարող վիճարկվել մեկ այլ անդամ պետությունում: Պարտատերերի իրավունքների յուրաքանչյուր սահմանափակում, մասնավորապես կասեցում կամ պարտքերից ազատում, հետևանքներ է առաջացնում մեկ այլ անդամ պետության տարածքում գտնվող ակտիվների մասով՝ միայն իրենց համաձայնությունը տված պարտատերերի համար:

Հոդված 18
Լուծարողի լիազորությունները

1. Հոդված 3«1»-ի համաձայն իրավասությամբ օժտված դատարանի կողմից նշանակված լուծարողը կարող է վարույթի հարուցման վայրի անդամ պետության իրավունքով իրեն վերապահված լիազորությունները իրականացնել այնքան ժամանակ, քանի դեռ այդ երկրում չեն հարուցվել սնանկության այլ վարույթներ կամ դրան հակառակ չեն ձեռնարկվել այդ պետությունում սնանկության վարույթ հարուցելու պահանջին հաջորդող պահպանության միջոցներ: Նա մասնավորապես, կարող է տեղափոխել ակտիվները այն անդամ պետության տարածքից, որտեղ դրանք գտնվում են՝ 5-րդ և 7-րդ հոդվածների դրույթների պահպանմամբ:

2. Հոդված 3«2»-ի համաձայն իրավասությամբ օժտված դատարանի կողմից նշանակված լուծարողը կարող է յուրաքանչյուր այլ անդամ պետությունում, օգտվելով դատական կամ արտադատական պաշտպանության միջոցներից, պնդել, որ շարժական գույքը վարույթի հարուցման վայրի պետության տարածքից այդ մյուս անդամ պետության տարածք է տեղափոխվել սնանկության վարույթը հարուցելուց հետո: Նա նաև կարող պարտատերերի շահերից բխող բողոքարկման ցանկացած վարույթ հարուցել:

3. Իր լիազորություններն իրականացնելիս լուծարողը ենթարկվում է այն անդամ պետության օրենքներին, որի տարածքում մտադիր է գործել, մասնավորապես ակտիվների իրացման ընթացակարգերի առումով: Այդ լիազորությունները չեն կարող ընդգրկել հարկադրանքի միջոցներ կիրառելու կամ իրավական վարույթներով որոշում կայացնելու կամ վեճերը լուծելու իրավունքը:

Հոդված 19
Լուծարողի նշանակման փաստի հաստատումը

Լուծարողի նշանակման փաստը հավաստվում է նրա նշանակման մասին որոշման բնօրինակի հավաստագրված պատճենով կամ իրավասու դատարանի կողմից տրված մեկ այլ հավաստագրի միջոցով:

Կարող է թարգմանություն պահանջվել այն անդամ պետության պաշտոնական լեզվով կամ պաշտոնական լեզուներից մեկով, որի տարածքում նա մտադիր է գործել: Ոչ մի օրինականացում կամ նման այլ ձևականություններ չեն կարող պահանջվել:

Հոդված 20 **Վերադարձ և համարժեք բաշխում**

1. Պարտատերը, որի պահանջը պարտապանի՝ մեկ այլ անդամ պետությունում գտնվող ակտիվների նկատմամբ որևէ կերպ՝ մասնավորապես պարտադիր կատարման միջոցով, լրիվ կամ մասնակի բավարարվել է հոդված 3«1»-ում նշված վարույթներն սկսելուց հետո, վերադարձնում է լուծարողին իր ձեռքբերածը՝ 5-րդ և 7-րդ հոդվածների դրույթների պահպանմամբ:

2. Պարտատերերի նկատմամբ հավասար վերաբերմունք ապահովելու համար, որևէ պարտատեր, որը սնանկության վարույթի ընթացքում իր պահանջի դիմաց ստացել է շահութաբաժին, այլ վարույթներում բաշխմանը մասնակցում է միայն այն դեպքում, երբ միևնույն հերթի կամ միևնույն կարգի պարտատերերն այդ մյուս վարույթներում ստացել են համարժեք շահութաբաժին:

Հոդված 21 **Հրապարակումը**

1. Լուծարողը կարող է պահանջել, որպեսզի սնանկության վարույթի հարուցման մասին վճռի ծանուցում և, հարկ եղած դեպքում, իր նշանակման մասին որոշումը հրապարակվի մեկ այլ անդամ պետությունում՝ այդ պետությունում հրապարակման համար նախատեսված կարգով: Նման հրապարակման մեջ նշվում է նաև նշանակված լուծարողը և այն, թե արդյոք իրավասության մասին կիրառված նորմը համապատասխանում է հոդված 3«1»-ին, թե 3«2»-ին:

2. Այդուհանդերձ, յուրաքանչյուր անդամ պետություն, որի տարածքում է պարտապանի տնտեսական գործունեության իրականացման վայրը, կարող է պահանջել պարտադիր հրապարակում: Նման դեպքերում, լուծարողը կամ համապատասխան լիազորություններով օժտված որևէ մարմին այն անդամ պետությունում, որտեղ հարուցվում են հոդված 3«1»-ում նշված վարույթները, ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ նման հրապարակումն ապահովելու համար:

Հոդված 22 **Գրանցումը պետական գրանցամատյանում**

1. Լուծարողը կարող է պահանջել, որպեսզի հոդված 3«1»-ում նշված վարույթների հարուցման վերաբերյալ վճիռները գրանցվեն կադաստրում, առևտրային ռեեստրում և այլ անդամ պետություններում գործող պետական այլ գրանցամատյանում:

2. Այդուհանդերձ, յուրաքանչյուր անդամ պետություն կարող է պահանջել պարտադիր գրանցում: Նման դեպքերում լուծարողը կամ համապատասխան լիազորություններով օժտված որևէ մարմին այն անդամ պետությունում, որտեղ հարուցվում են հողված 3«1»-ում նշված վարույթները, ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ նման գրանցումն ապահովելու համար:

Հոդված 23

Ծախսերը

21-րդ և 22-րդ հոդվածներով նախատեսված հրապարակման և գրանցման ծախսերը համարվում են վարույթների ընթացքում առաջացած դատական ծախսեր:

Հոդված 24

Պարտապանի հանդեպ պարտավորություն կատարելը

1. Եթե անդամ պետությունում կատարվել է պարտավորություն մեկ այլ անդամ պետությունում հարուցված սնանկության վարույթում գտնվող պարտապանի օգտին, երբ այդ պարտավորությունը պետք է կատարվեր այդ վարույթում հանդես եկող լուծարողի օգտին, պարտավորությունը կատարողը համարվում է պարտավորությունից ազատված, եթե նա չի իմացել վարույթի հարուցման մասին:

2. Եթե նման պարտավորություն կատարվում է նախքան 21-րդ հոդվածով նախատեսված հրապարակումը, այլ բան ապացուցված չլինելու դեպքում համարվում է, որ պարտավորություն կատարած անձը չի իմացել սնանկության վարույթի հարուցման մասին. եթե պարտավորությունը կատարվում է նման հրապարակումից հետո, այլ բան ապացուցված չլինելու դեպքում համարվում է, որ պարտավորություն կատարած անձը իմացել է վարույթի հարուցման մասին:

Հոդված 25

Այլ վճիռների ճանաչումը և կատարման ենթակա լինելը

1. Վճիռները, որոնք կայացվել են դատարանի կողմից, որի՝ վարույթ հարուցելու մասին վճիռը ճանաչվում է 16-րդ հոդվածի համաձայն և, որոնք վերաբերում են սնանկության վարույթի ընթացքին և ավարտին, ինչպես նաև այդ դատարանի կողմից հաստատված հաշտության համաձայնությունները ճանաչվում են առանց հետագա ձևականությունների: Նման վճիռները կատարվում են «Քաղաքացիական և առևտրային գործերով իրավասության և վճիռների կատարման մասին» Բրյուսելի կոնվենցիայի 31-51-րդ հոդվածների համաձայն՝ բացառությամբ հոդված 34«2»-ի՝ այդ կոնվենցիային միանալու մասին կոնվենցիաներով դրանում կատարված փոփոխություններով: Առաջին ենթապարբերությունը կիրառվում է նաև անմիջականորեն սնանկության վարույթներից բխող և դրանց հետ սերտորեն կապված վճիռների նկատմամբ, նույնիսկ եթե դրանք կայացվել են մեկ այլ դատարանի կողմից:

Առաջին ենթապարբերությունը կիրառվում է նաև սնանկության վարույթ սկսելու պահանջից հետո ձեռնարկված պահպանության միջոցների հետ կապված վճիռների նկատմամբ:

2. Առաջին պարբերությունում նշվածներից բացի, վճիռների ճանաչումը և կատարումը կարգավորվում է առաջին պարբերությունում նշված Համաձայնագրով պայմանով, որ այդ Համաձայնագիրը կիրառելի է:

Անդամ պետությունները պարտավոր չեն ճանաչել կամ կատարել 1-ին պարբերությունում նշված որևէ վճիռ, որը կարող է հանգեցնել անձնական ազատության կամ փոստային գաղտնիության սահմանափակմանը:

Հոդված 26⁶
Հանրային կարգը

Յուրաքանչյուր անդամ պետություն կարող է հրաժարվել մեկ այլ պետությունում հարուցված սնանկության վարույթները ճանաչելուց կամ նման վարույթների համատեքստում կայացված վճիռը կատարելուց, երբ նման ճանաչման կամ կատարման հետևանքները ակնհայտորեն հակասում են պետության հանրային կարգին՝ մասնավորապես հիմնարար սկզբունքներին կամ անձի սահմանադրական իրավունքներին և ազատություններին:

ԳԼՈՒԽ III
ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ

Հոդված 27
Վարույթ հարուցելը

Հոդված 3«1»-ում նշված և մեկ այլ անդամ պետությունում ճանաչված վարույթի հարուցումն անդամ պետության դատարանի կողմից (հիմնական վարույթներ) հնարավորություն է ընձեռում վարույթ հարուցել այդ մյուս անդամ պետությունում, որի դատարանը հոդված 3«2»-ի համաձայն օժտված է իրավասությամբ՝ առանց այդ պետությունում պարտապանի անվճարունակությունն ուսումնասիրելու: Վերջին վարույթները պետք է լինեն հավելված Բ-ում թվարկված վարույթների շարքում: Դրանց հետևանքները սահմանափակվում են պարտապանի՝ այդ պետության տարածքում գտնվող ակտիվներով:

Հոդված 28
Կիրառվող իրավունքը

Բացառությամբ սույն Կանոնակարգով նախատեսված դեպքերի՝ երկրորդական վարույթի նկատմամբ կիրառվող իրավունքն այն անդամ պետության իրավունքն է, որի տարածքում այն հարուցվել է:

Հոդված 29
Վարույթ հարուցելու պահանջ ներկայացնելու իրավունքը

Երկրորդական վարույթի հարուցում կարող են պահանջել՝

ա) հիմնական վարույթում լուծարողը.

⁶ Ուշադրություն դարձրե՛ք 26-րդ և 37-րդ հոդվածների կիրառման վերաբերյալ Պորտուգալիայի հայտարարությանը (ՊՏԸ 183, 30.06.2000 թ., էջ 1):

բ) որևէ այլ անձ կամ մարմին, որը լիազորված է սնանկության վարույթի հարուցման պահանջ ներկայացնել այն անդամ պետության իրավունքի համաձայն, որի տարածքում ներկայացվում է երկրորդական վարույթ հարուցելու պահանջը:

Հոդված 30

Դատական ծախսերի նախավճարը

Երբ այն անդամ պետության իրավունքը, որտեղ երկրորդական վարույթ հարուցելու պահանջ է ներկայացվում, պահանջում է, որ պարտապանի ակտիվները բավականաչափ լինեն՝ մասամբ կամ ամբողջությամբ ծածկելու համար դատական ծախսերը, դատարանը կարող է նման պահանջ ստանալու դեպքում դիմողից պահանջել կատարել ծախսերի նախավճար կամ տրամադրել համապատասխան ապահովման միջոց:

Հոդված 31

Համագործակցելու և տեղեկություններ փոխանցելու պարտականությունը

1. Տեղեկությունների փոխանցումը սահմանափակող կանոնների պահպանմամբ՝ հիմնական և երկրորդական վարույթներում լուծարողները պետք է պատշաճ կերպով տեղեկություններ տրամադրեն միմյանց: Նրանք անմիջապես տրամադրում են ցանկացած տեղեկություն, որը կարող է կարևորություն ներկայացնել մյուս վարույթի համար, մասնավորապես պահանջներ ներկայացնելիս և դրանք քննելիս գրանցված առաջընթացի և վարույթներն ավարտելու գործընթացին ուղղված բոլոր միջոցառումների վերաբերյալ:
2. Յուրաքանչյուր վարույթի նկատմամբ կիրառվող կանոնների պահպանմամբ՝ հիմնական վարույթում լուծարողը և երկրորդական վարույթներում լուծարողները պարտավոր են համագործակցել միմյանց հետ:
3. Երկրորդական վարույթում լուծարողը հիմնական վարույթում լուծարողին լուծարման կամ երկրորդական վարույթում ակտիվների օգտագործման մասին առաջարկություններ ներկայացնելու վաղ հնարավորություն է ընձեռում:

Հոդված 32

Պարտատիրոջ իրավունքների իրականացումը

1. Յուրաքանչյուր պարտատեր կարող է ներկայացնել իր պահանջը հիմնական վարույթում և որևէ երկրորդական վարույթում:
2. Հիմնական և որևէ երկրորդական վարույթում լուծարողներն այլ վարույթներում ներկայացնում են պահանջներ, որոնք արդեն ներկայացվել են այն վարույթներում, որոնց համար նրանք նշանակված են՝ պայմանով, որ դա ծառայում է վերջին վարույթներում պարտատերերի շահերին՝ պարտատերերի՝ պահանջների ներկայացմանն առարկելու կամ այն հետ վերցնելու իրավունքի պահպանմամբ այն դեպքում, երբ դա նախատեսված է կիրառվող իրավունքով:
3. Հիմնական կամ երկրորդական վարույթներում լուծարողը լիազորված է մասնակցել այլ վարույթներին միևնույն հիմունքներով, ինչ պարտատերը՝ մասնավորապես մասնակցելով պարտատերերի հանդիպումներին:

Հոդված 33
Լուծարման գործընթացի կասեցումը

1. Երկրորդական վարույթը հարուցած դատարանը հիմնական վարույթում լուծարողից պահանջ ստանալուց հետո կասեցնում է լուծարման գործընթացն ամբողջությամբ կամ մասամբ՝ պայմանով, որ այդ դեպքում այն հիմնական վարույթում լուծարողից կարող է պահանջել ձեռնարկել ցանկացած համապատասխան միջոց՝ երաշխավորելու համար երկրորդական վարույթում պարտատերերի և պարտատերերի առանձին խմբերի շահերը: Լուծարողի կողմից ներկայացված նման պահանջը կարող է մերժվել, միայն եթե ակնհայտ է, որ այն անհրաժեշտություն չէ հիմնական վարույթում պարտատերերի համար: Լուծարման գործընթացը կարող է կասեցվել մինչև երեք ամիս ժամկետով: Այն կարող է շարունակվել կամ երկարաձգվել նույն ժամկետով:

2. 1-ին պարբերությունում նշված դատարանը վերսկսում է լուծարման գործընթացը՝

- հիմնական վարույթներում լուծարողի պահանջով.

- իր սեփական նախաձեռնությամբ՝ պարտատիրոջ պահանջով կամ երկրորդական վարույթներում լուծարողի պահանջով, եթե այդ միջոցառումն այլևս արդարացված չէ՝ մասնավորապես հիմնական կամ երկրորդական վարույթներում պարտատերերի շահերի տեսակետից:

Հոդված 34
Մնանկության երկրորդական վարույթներն ավարտող միջոցառումները

1. Եթե երկրորդական վարույթների նկատմամբ կիրառվող իրավունքը հնարավորություն է տալիս նման վարույթներն ավարտել առանց լուծարման գործընթացի՝ ֆինանսական առողջացման ծրագրով, մորատորիումով կամ դրանց համեմատելի այլ միջոցով, հիմնական վարույթներում լուծարողը լիազորված է ինքնուրույն առաջարկել նման միջոցառում:

Առաջին ենթապարբերությունում նշված միջոցառման միջոցով երկրորդական վարույթներն ավարտելը չի դառնում վերջնական՝ առանց հիմնական վարույթում լուծարողի համաձայնության. այդ համաձայնության բացակայության դեպքում, այդուհանդերձ այն դառնում է վերջնական, եթե առաջարկվող միջոցառումները չեն շոշափում հիմնական վարույթներում պարտատերերի ֆինանսական շահերը:

2. 1-ին պարբերությունում նշված և երկրորդական վարույթում առաջարկվող միջոցառումից, ինչպես օրինակ վճարման կասեցումը կամ պարտքերից ազատումը, բխող պարտատերերի իրավունքների որևէ սահմանափակում չի կարող ազդել պարտապանի այն ակտիվների վրա, որոնց չի վերաբերում այդ վարույթը՝ առանց բոլոր շահագրգիռ պարտատերերի համաձայնության:

3. Հոդված 33-ի համաձայն լուծարման գործընթացի կասեցման ընթացքում միայն հիմնական վարույթում լուծարողը կամ պարտապանը, առաջինի համաձայնությամբ, կարող են երկրորդական վարույթում առաջարկել սույն հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված միջոցառումները. նման միջոցառման ոչ մի այլ առաջարկություն չի կարող դրվել քվերարկության կամ հաստատվել:

Հոդված 35

Երկրորդական վարույթներում մնացող ակտիվները

Եթե երկրորդական վարույթում ակտիվների իրացմամբ հնարավոր է բավարարել բոլոր պահանջները, որոնք թույլատրելի են այդ վարույթի ներքո, այդ վարույթում նշանակված լուծարողը մնացած բոլոր ակտիվները անմիջապես փոխանցում է հիմնական վարույթում լուծարողին:

Հոդված 36

Հիմնական վարույթի հետագա հարուցումը

Եթե հոդված 3«1»-ում նշված վարույթները հարուցվում են հոդված 3«2»-ում նշված վարույթները մեկ այլ անդամ պետությունում հարուցելուց հետո, առաջինը հարուցված վարույթների նկատմամբ 31-35-րդ հոդվածները կիրառվում են այնքանով, որքանով դա թույլ է տալիս վարույթների ընթացքը:

Հոդված 37⁷

Առավել վաղ վարույթների իրավական կարգավիճակի փոփոխությունը

Հիմնական վարույթում լուծարողը կարող է պահանջել, որպեսզի հավելված Ա-ում թվարկված և մեկ այլ անդամ պետությունում նախկինում հարուցված վարույթները վերածվեն լուծարային վարույթների, եթե դա բխում է հիմնական վարույթներում պարտատերերի շահերից:

Հոդված 3«2»-ի համաձայն իրավասությամբ օժտված դատարանը որոշում է կայացնում վարույթը հավելված Բ-ում թվարկված վարույթներից որևէ մեկի վերածելու մասին:

Հոդված 38

Պահպանության միջոցները

Եթե անդամ պետության դատարանը, որը հոդված 3«1»-ի համաձայն օժտված է իրավասությամբ, նշանակում է ժամանակավոր կառավարիչ՝ ապահովելու համար պարտապանի ակտիվների պահպանությունը, ժամանակավոր կառավարիչը լիազորված է պահանջել պարտապանի՝ մեկ այլ անդամ պետությունում գտնվող ակտիվների ապահովման և պահպանության համար ցանկացած միջոցառում, որը նախատեսվում է այդ պետության իրավունքով՝ սնանկության վարույթ հարուցելու պահանջի և վարույթ հարուցելու մասին վճռի միջև ընկած ժամանակահատվածի համար:

ԳԼՈՒԽ IV

ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Հոդված 39

Պահանջներ ներկայացնելու իրավունքը

⁷ Ուշադրություն դարձրե՛ք 26-րդ և 37-րդ հոդվածների կիրառման վերաբերյալ Պորտուգալիայի հայտարարությանը (ՊՏԿ 183, 30.06.2000 թ., էջ 1):

Յուրաքանչյուր պարտատեր, որը, բացառությամբ վարույթի հարուցման վայրի պետության, մշտապես կամ առավելապես բնակվում է կամ, որի գտնվելու վայրը այլ անդամ պետությունում է, ներառյալ անդամ պետությունների հարկային մարմինները և սոցիալական ապահովության մարմինները, սնանկության վարույթում իրավունք ունի գրավոր ձևով ներկայացնելու իր պահանջները:

Հոդված 40

Պարտատերերին տեղեկացնելու պարտականությունը

1. Անդամ պետությունում սնանկության վարույթ հարուցելուց անմիջապես հետո այդ պետության իրավասու դատարանը կամ դրա կողմից նշանակված լուծարողն անմիջապես տեղեկացնում են հայտնի պարտատերերին, որոնք մշտապես կամ առավելապես բնակվում են կամ որոնց գտնվելու վայրը մեկ այլ անդամ պետությունում է:

2. Անհատական ծանուցմամբ տրամադրված այդ տեղեկությունները մասնավորապես ներառում են ժամանակային սահմանափակումներ, այդ ժամանակային սահմանափակումների հետ կապված պատժամիջոցներ, ներկայացվող պահանջների ընդունման համար լիազորված մարմինը կամ պաշտոնյան և սահմանված այլ միջոցներ: Նման ծանուցման մեջ նաև նշվում է, թե արդյո՞ք պարտատերերը, ում պահանջները նախապատվության իրավունք ունեն կամ ապահովված են գույքով, պետք է ներկայացնեն իրենց պահանջները:

Հոդված 41

Պահանջի ներկայացման բովանդակությունը

Պարտատերն ուղարկում է, առկայության դեպքում, օժանդակ փաստաթղթերի պատճենները և մատնանշում է պահանջի բնույթը, դրա ծագման օրը և չափը, ինչպես նաև՝ արդյո՞ք նա պահանջի կապակցությամբ վկայակոչում է առաջնահերթության որևէ իրավունք, ապահովություն գույքով կամ սեփականության իրավունքի պահպանում, և թե ինչ ակտիվներ են ընգրկված նրա կողմից վկայակոչվող երաշխիքով:

Հոդված 42

Լեզուները

1. 40-րդ հոդվածով նախատեսված տեղեկությունները տրամադրվում են վարույթի հարուցման վայրի անդամ պետության պաշտոնական լեզվով կամ պաշտոնական լեզուներից մեկով: Այդ նպատակով պետք է օգտագործվի հետևյալ վերտառությամբ ձևաթուղթ՝ «Պահանջներ ներկայացնելու հրավեր: Պետք է հետևել ժամկետներին» Եվրոպական միության կառույցների բոլոր պաշտոնական լեզուներով:

2. Յուրաքանչյուր պարտատեր, որը մշտապես կամ առավելապես բնակվում է կամ, որի գտնվելու վայրը վարույթի հարուցման վայրի պետությունից բացի այլ անդամ պետությունում է, կարող է իր պահանջը ներկայացնել այդ պետության պաշտոնական լեզվով կամ պաշտոնական լեզուներից մեկով: Այդ դեպքում, սակայն, պահանջի ներկայացումը պետք է պարունակի «Պահանջի ներկայացում» վերնագիրը վարույթի հարուցման վայրի պետության պաշտոնական լեզվով կամ պաշտոնական լեզուներից որևէ մեկով: Ի հավելումն, նրանից կարող է պահանջվել տրամադրել

թարգմանություն վարույթի հարուցման վայրի պետության պաշտոնական լեզվով կամ պաշտոնական լեզուներից մեկով:

ԳԼՈՒԽ V
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 43
Գործողությունը ժամանակի մեջ

Սույն Կանոնակարգի դրույթները կիրառվում են միայն այն սնանկության վարույթների նկատմամբ, որոնք հարուցվել են դրա ուժի մեջ մտնելուց հետո: Սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց առաջ պարտապանի կատարած գործողությունները շարունակում են կարգավորվել այն իրավունքով, որը կիրառվում էր այդ գործողությունների կատարման ժամանակ:

Հոդված 44
Առնչությունը այլ կոնվենցիաների հետ

1. Ուժի մեջ մտնելուց հետո սույն Կանոնակարգը, դրանում նշված հարցերի մասով անդամ պետությունների միջև հարաբերություններում, փոխարինում է երկու կամ ավելի անդամ պետությունների միջև կնքված կոնվենցիաներին, մասնավորապես.

ա) «Իրավասության և վճիռների վավերության և կատարման, արբիտրաժային վճռների և նույնական փաստաթղթերի մասին» 1899 թվականի հուլիսի 8-ին Բելգիայի և Ֆրանսիայի միջև Փարիզում ստորագրված կոնվենցիան:

բ) «Սնանկության, գործունեության դադարման, վճարունակության վերականգնմանն ուղղված միջոցառումների, պարտատերերի պահանջների բավարարման սառեցումների և վճարումների կասեցման մասին» 1969 թվականի հուլիսի 16-ին Բելգիայի և Ֆրանսիայի միջև Բրյուսելում ստորագրված կոնվենցիան (1973 թվականի հունիսի 13-ի Լրացուցիչ արձանագրության հետ միասին):

գ) «Տարածքային ընդդատության, սնանկության, վճիռների, արբիտրաժային վճիռների և նույնական փաստաթղթերի վավերության և կատարման մասին 1925 թվականի մարտի 28-ին Բելգիայի և Նիդերլանդների միջև Բրյուսելում ստորագրված կոնվենցիան:

դ) «Սնանկության, գործունեության դադարման, վճարունակության վերականգնմանն ուղղված միջոցառումների և պարտատերերի պահանջների բավարարման սառեցման մասին» 1979 թվականի մայիսի 25-ին Գերմանիայի և Ավստրիայի միջև Վիեննայում ստորագրված համաձայնագիրը:

ե) «Սնանկության գործերով իրավասության, վճիռների ճանաչման և կատարման մասին» 1979 թվականի փետրվարի 27-ին Ֆրանսիայի և Ավստրիայի միջև Վիեննայում ստորագրված կոնվենցիան:

զ) «Քաղաքացիական և առևտրային գործերով վճիռների կատարման մասին» 1930 թվականի հունիսի 3-ին Ֆրանսիայի և Իտալիայի միջև Հռոմում ստորագրված կոնվենցիան:

ե) Մնանկության, գործունեության դադարման, վճարունակության վերականգնմանն ուղղված միջոցառումների և պարտատերերի պահանջների բավարարման սառեցման մասին» 1977 թվականի հուլիսի 12-ին Իտալիայի և Ավստրիայի միջև Հռոմում ստորագրված կոնվենցիան:

ը) «Քաղաքացիական և առևտրային գործերով վճիռների և կատարման ենթակա այլ փաստաթղթերի փոխադարձ ճանաչման ու կատարման մասին» 1962 թվականի օգոստոսի 30-ին Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Նիդեռլանդների Թագավորության միջև Հաագայում ստորագրված կոնվենցիան:

թ) «Քաղաքացիական և առևտրային գործերով վճիռների փոխադարձ կատարում նախատեսող» 1934 թվականի մայիսի 2-ին Միացյալ Թագավորության և Բելգիայի Թագավորության միջև Բրյուսելում ստորագրված կոնվենցիան՝ ներառյալ արձանագրությունը:

ժ) «Մնանկության մասին» 1933 թվականի նոյեմբերի 7-ին Դանիայի, Ֆինլանդիայի, Նորվեգիայի, Շվեդիայի և Իսլանդիայի միջև Կոպենհագենում ստորագրված կոնվենցիան:

ժա) «Մնանկության մասին որոշակի միջազգային հայեցակետերի մասին» 1990 թվականի հունիսի 5-ին Ստամբուլում ստորագրված եվրոպական կոնվենցիան:

2.1-ին պարբերությունում նշված կոնվենցիաները շարունակում են գործել սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց առաջ հարուցված վարույթների մասով:

3. Սույն Կանոնակարգը չի կիրառվում՝

ա) որևէ անդամ պետությունում՝ այնքանով, որքանով դա անհամատեղելի է սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց առաջ մեկ կամ ավելի երրորդ երկրների հետ այդ պետության կողմից կնքված կոնվենցիայից բխող սնանկության հետ կապված պարտավորությունների հետ.

բ) Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում այնքանով, որքանով դա անհամատեղելի է սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահին Բրիտանական համագործակցության հետ գոյություն ունեցող որևէ պայմանավորվածությունից բխող անվճարունակ ընկերությունների սնանկության և գործունեության դադարման հետ կապված պարտավորությունների հետ:

Հոդված 45 Հավելվածների փոփոխությունը

Հավելվածները կարող են փոփոխվել որակյալ մեծամասնությամբ գործող Խորհրդի կողմից՝ իր անդամներից մեկի նախաձեռնությամբ կամ Հանձնաժողովի առաջարկությամբ:

Հոդված 46 Զեկույցները

2010 թվականի հունիսի 1-ից ոչ ուշ և դրանից հետո ամեն հինգ տարին մեկ անգամ Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտին, Խորհրդին և Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեին զեկույց է ներկայացնում սույն Կանոնակարգի կիրառման մասին: Անհրաժեշտության դեպքում, այդ զեկույցին կից ներկայացվում է սույն Կանոնակարգի վերանայման համար առաջարկություն:

Հոդված 47
Ուժի մեջ մտնելը

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում 2002 թվականի մայիսի 31-ից: Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է և գործում է անմիջականորեն անդամ պետություններում՝ Եվրոպական համայնքի հիմնադրման մասին համաձայնագրի համաձայն:

Կատարված է Բրյուսելում, 2000 թվականի մայիսի 29-ին:

Խորհրդի կողմից՝ Նախագահ Ա. Կոստա

ՀԱՎԵԼՎԱԾ Ա
Հոդված 2«ա»-ում նշված սնանկության վարույթները

ԲԵԼԳԻԱ՝

- Het faillissement//La faillite
- Het gerechtelijk akkoord//Le concordat judiciaire
- De collectieve schuldenregeling//Le règlement collectif de dettes

ԳԵՐՄԱՆԻԱ՝

- Das Konkursverfahren
- Das gerichtliche Vergleichsverfahren
- Das Gesamtvollstreckungsverfahren
- Das Insolvenzverfahren

Հունաստան՝

- Πτώχευση
- Η ειδική εκκαθάριση
- Η προσωρινή διαχείριση εταιρίας, διοίκηση και η διαχείριση των πιστωτών
- Η υπαγωγή επιχείρησης υπό επίτροπο με σκοπό τη σύναψη συμβιβασμού με τους πιστωτές

ԻՍՊԱՆԻԱ՝

- Concurso de acreedores
- Quiebra
- Suspensión de pagos

ՖՐԱՆՍԻԱ՝

- Liquidation judiciaire
- Redressement judiciaire avec nomination d'un administrateur

ԻՌԼԱՆԴԻԱ՝

- Compulsory winding up by the court
- Bankruptcy
- The administration in bankruptcy of the estate of persons dying insolvent
- Winding-up in bankruptcy of partnerships
- Creditors' voluntary winding up (with confirmation of a Court)
- Arrangements under the control of the court which involve the vesting of all or part of the property of the debtor in the Official Assignee for realisation and distribution
- Company examinership

ԻՏԱԼԻԱ՝

- Fallimento
- Concordato preventivo
- Liquidazione coatta amministrativa
- Amministrazione straordinaria
- Amministrazione controllata

ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ՝

- Faillite
- Gestion contrôlée
- Concordat préventif de faillite (par abandon d'actif)
- Régime spécial de liquidation du notariat

ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐ՝

- Het faillissement
- De surséance van betaling
- De schuldsaneringsregeling natuurlijke personen

ԱՎԱՏՐԻՄ`

- Das Konkursverfahren
- Das Ausgleichsverfahren

ՊՈՐՏՈՒԳԱԼԻՄ`

- O processo de falência
- Os processos especiais de recuperação de empresa, ou seja:
- A concordata
- A reconstituição empresarial
- A reestruturação financeira
- A gestão controlada

ՖԻՆԼԱՆԴԻՄ`

- Konkurssi//konkurs
- Yrityssaneeraus//företagssanering

ՇՎԵԴԻՄ`

- Konkurs
- Företagsrekonstruktion

ՄԻԱՅՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ`

- Winding up by or subject to the supervision of the court
- Creditors' voluntary winding up (with confirmation by the court)
- Administration
- Voluntary arrangements under insolvency legislation –
- Bankruptcy or sequestration

Հավելված Բ
Հոդված 2«գ»-ում նշված լուծարային վարույթները

ԲԵԼԳԻԱ՝

- Het faillissement//La faillite

ԳԵՐՄԱՆԻԱ՝

- Das Konkursverfahren
- Das Gesamtvollstreckungsverfahren
- Das Insolvenzverfahren >ISO_7>

ՀՈՒՆԱՍՏԱՆ՝

- Πρω΄χευση
- Η ειδική εκκαθα΄ριση

ԻՍՊԱՆԻԱ՝

- Concurso de acreedores
- Quiebra
- Suspensión de pagos basada en la insolvencia definitiva

ՖՐԱՆՍԻԱ՝

- Liquidation judiciaire

ԻՌԼԱՆԴԻԱ՝

- Compulsory winding up
- Bankruptcy
- The administration in bankruptcy of the estate of persons dying insolvent
- Winding-up in bankruptcy of partnerships

- Creditors' voluntary winding up (with confirmation of a court)
- Arrangements under the control of the court which involve the vesting of all or part of the property of the debtor in the Official Assignee for realisation and distribution

ԻՏԱԼԻԱ՝

- Fallimento
- Liquidazione coatta amministrativa

ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ՝

- Faillite
- Régime spécial de liquidation du notariat

ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐ՝

- Het faillissement
- De schuldsaneringsregeling natuurlijke personen

ԱՎՍՏՐԻԱ՝

- Das Konkursverfahren

ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ՝

- O processo de falência

ՖԻՆԼԱՆԴԻԱ՝

- Konkurssi//konkurs

ՇՎԵԴԻԱ՝

- Konkurs

ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ`

- Winding up by or subject to the supervision of the court
- Creditors' voluntary winding up (with confirmation by the court)
- Bankruptcy or sequestration

Հավելված Գ Հոդված 2«բ»-ում նշված լուծարողները

ԲԵԼԳԻԱ`

- De curator//Le curateur
- De commissaris inzake opschorting//Le commissaire au sursis
- De schuldbemiddelaar//Le médiateur de dettes

ԳԵՐՄԱՆԻԱ`

- Konkursverwalter
- Vergleichsverwalter
- Sachwalter (nach der Vergleichsordnung)
- Verwalter
- Insolvenzverwalter
- Sachwalter (nach der Insolvenzordnung)
- Treuhänder
- Vorläufer Insolvenzverwalter >ISO_7<

Հունաստան`

- Ο σὺνδικο
- Ο προσωρινός διαχειριστής. Η διοικούσα επιτροπή των πιστωτών

- Ο ειδικός εκκαθαριστής
- Ο επίτροπος

ԻՍՊԱՆԻԱ՝

- Depositario-administrador
- Interventor o Interventores
- Sndicos
- Comisario

ՖՐԱՆՍԻԱ՝

- Représentant des créanciers
- Mandataire liquidateur
- Administrateur judiciaire
- Commissaire à l'exécution de plan

ԻՌԼԱՆԴԻԱ՝

- Liquidator
- Official Assignee
- Trustee in bankruptcy
- Provisional Liquidator
- Examiner

ԻՏԱԼԻԱ՝

- Curatore
- Commissario

ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ՝

- Le curateur
- Le commissaire

- Le liquidateur
- Le conseil de gérance de la section d'assainissement du notariat

ՆԻՂԵՌԼԱՆԴՆԵՐ՝

- De curator in het faillissement
- De bewindvoerder in de surséance van betaling
- De bewindvoerder in de schuldsaneringsregeling natuurlijke personen

ԱՎՍՏՐԻԱ՝

- Masseverwalter
- Ausgleichsverwalter
- Sachwalter
- Treuhänder
- Besondere Verwalter
- Vorläufger Verwalter

Konkursgericht

ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ՝

- Gestor judicial
- Liquidatário judicial
- Comissão de credores

ՖԻՆԼԱՆԴԻԱ՝

- Pesänhoitaja//boförvaltare
- Selvittäjä//utredare

ՇՎԵԴԻԱ՝

- Förvaltare
- God man
- Rekonstruktör

ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ՝

- Liquidator
- Supervisor of a voluntary arrangement
- Administrator
- Official Receiver
- Trustee
- Judicial factor